

Լենային Ղարաքաղի հանրապետության նախագահ Արկադի Գուկասեան յայտարարեց, որ Լենային Ղարաքաղ պիտի շարունակէ պայքարի տագնապին խաղաղ լուծման եւ միջազգային ճանաչման համար:  
Միւս կողմէ, Լենային Ղարաքաղի կառավարութեան առընթեր գործող ներգաղթի եւ գաղթականներու հարցերու վարչութեան պետ Սերժ Ամիրխանեան յայտնեց, որ Ստեփանակերտ Իրաքի հայերու վերաբնակեցման որեւէ դիմում չէ ստացած: Ամիրխանեան կ'անդրադառնար ալրայէճանական լրատուամիջոցներու այն ապատեղեկատուութեան, թէ Հայաստան մտադրած է Իրաքէն հայ գաղթականներ տեղադրել Լենային Ղարաքաղ:  
Ամիրխանեան միաժամանակ նկատել տուաւ, որ եթէ Իրաքեան պատերազմի հետեւաւն ինչընէ, Ստեփանակերտ, առաջնորդուով ժընեի ուխտով, պիտի պորակցի անոնց՝ իր կարելիութեան սահմաններուն մէջ:

### ՂԱՍԱՍԿՈՍԻ ՄԷՋ

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՔՆՆԱՐԿԵՅԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ



Սուրիոյ նախագահ Պաշար Ասար Դաւանկոսի մէջ երէկ ընդունեց վարչապետ Ռաֆիք Նարիթին, որուն հետ ընկարկեց Իրաքի դէմ դապերագոյն գարգացումները, Նարիթի Երոստա քաղաքական շրջադարձին արդիւնքները, ինչպէս նաեւ յիշակալներու միջոցով կ'արտահայտուի Երկրորդ Կոնգրէսի արտահայտուած դաւանանքները:

Նախագահ Ասար ընդունեց նաեւ արդարադատական նախարար Սէյիմ Զրեմ-ժիէն, որուն հետ ընկարկեց երկրորդ Կոնգրէսի հարցեր:

## ՊԸՐՐԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՍՈՒՐԻՈՅ ՈՒՂՂՈՒԱԾ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Լիբանանի մէջ պետական անձնատուրութիւններ շարունակեցին դատաւարութիւն Միացեալ Նահանգներու կողմէ Սուրիոյ ուղղուած սպառնալիքները: Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի յայտնեց, որ ամերիկեան վարչակազմը պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտի բերնով կ'ամբաստանէ Սուրիան Իրաքի պէք յատկացնելու յանցանքով:

Պըրրի ըսաւ, որ իսկական մարտանկարները տեղի կ'ունենայ Իրաքի եւ Մ. Նահանգներու միջեւ: «Իրականութեան մէջ իրաքցիները սպանող հրթիռները իրաքցիներու արտադրութիւններ են, որոնք կը գործածուին Ուաշինգթոնի կողմէ», ըսաւ Պըրրի:

Պըրրի շեշտեց, որ Ռամսֆելտ պատճառաբանութիւններ կ'որոնէ ծածկելու համար Մ. Նահանգներու պարտութիւնը կամ Հարաւային Իրաքի մէջ իրաքցիներուն անպարտելիութիւնը: Պըրրի աւելցուց, որ Սուրիոյ դէմ սպառնալու կամ «դպչելու» պարագային՝ արաք ազգը իսկապէս մէկ բունցքով պիտի դիմադրէ բռնարարներուն:

## ԳՎՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԵՆ ՄՏԱՀՈԳԻՉ ՈՒ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԴԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ 4000 ԱՐԱՔՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՊԱՂՏԱՏ ԺԻՆԱՏԻ ԵՐԳՈՒՄՈՎ



Դաշնակից ուժեր կը շարունակեն իրենց յառաջխաղացը դէպի Պաղտատ

Իրաքի դէմ յայտարարուած պատերազմին շարժապարհի նորագոյն իրադարձութիւնը կը նկատուի անձնասպանական գործողութիւններու երեւոյթը, որ նոր մարտահրահչներու դիմաց կը դնէ դաշնակից ուժերը: Շարժապարհին տեղի ունեցան անձնասպանական երկու գործողութիւններ ամերիկեան ու բրիտանական ուժերուն դէմ, որոնք տասնեակ մը զոհեր խլեցին: Իրաք յայտարարեց, որ ամէն միջոցի պիտի դիմէ արգելակելու համար դաշնակից ուժերուն յառաջընթացը դէպի Պաղտատ: Ամերիկացի բարձրաստիճան գինուորականներ իրենց կարգին ըսին, որ պատրաստ են իրենց ուղղակի գործողութիւնը պատշաճեցնելու անձնասպանական գործողութիւններու սպառնալիքին:

Անձնասպանական առաջին գործողութիւնը տեղի ունեցաւ Շարաթ օր, Նաթաֆի մօտ, երբ քաղաքի վարորդ մը սակահարուած ինքնաշարժը քննարկեց ամերիկացի զինուորներու մէկ անցարգելին վրայ: Չորս զինուորներ սպանուեցան: Ականատես զինուոր մը ըսաւ, որ վարորդը այնպէս մը ձեւացուցած էր, թէ օգնութիւն կ'ուզէ: Չինուորները երբ մօտեցած են, ան պայթեցուցած է ինքնաշարժը: Պաղտատ հաստատեց լուրը, աւելցնելով, որ վարորդը իրաքցի սպայ մըն է: Ամերիկեան աղբիւրները եւս հաստատեցին, որ անձնասպանական գործողութիւն մը կատարուած է, սակայն զոհերու թիւի մասին ոչինչ ըսին:

Նաթաֆի գործողութիւնը տեղի կ'ունենար այն պահուն, երբ իրաքցի շի կրօնապետներ կողմէ կ'ուղղէին իրաքցիներուն ամէն միջոցներով դէմ դնելու յարձակողութիւնը: Իրաքի փոխ նախագահ Թահա Եասին Ռամատան ողջունեց գործողութիւնը, զիտել տալով, որ ասիական առաջին է երկար շարքի մը: Ռամատան ըսաւ, որ իրաքցի ամբողջ ժողովուրդը՝ ներառեալ կիները, ֆետայիները պիտի վերածուին: Իրաքեան պատկերասփիւռը հաղորդեց, որ Նաթաֆի գործողութիւնը 11 զոհ պատճառած է: Այլ աղբիւրները սակայն յայտարարեցին, որ չորս է թիւը: Ամերիկեան ուժերու հրամանատար գործ. Ռիչըրտ Մայրըզ ըսաւ, որ դաշնակից ուժերը իրենց

ուղղակի գործողութիւնը պիտի պատշաճեցնեն՝ յաղթահարելու համար «ոչ աւանդական» մարտածելըն ու սպառնալիքները:

Երկրորդ գործողութիւնը տեղի ունեցաւ երէկ Քուէյթի հիւսիսային սահմանին մօտ, ամերիկեան զինուորական բանակապետի մէջ, երբ բռնատար փոխադրական մը սուրբով բախած է խուճար մը զինուորներու զոհեր ու վիրաւորներ պատճառելով: Ամերիկեան աղբիւրները չուզեցին հաստատել, թէ գործողութիւնը անձնասպանական բնոյթ ունի: Գնդապետ մը ըսաւ, որ հետաքննութիւն կը կատարուի ստուգելու համար մանրամասնութիւնները:

Իրաքեան բանակի բանբեր գործ. Հազէմ Ռատուի մամլոյ ասուլիսի մը ընթացքին ըսաւ, որ նահատակութեան գործողութիւնները պիտի շարունակուին: Ան աւելցուց, որ այդ գործողութիւններուն պիտի մասնակցին ոչ միայն իրաքցիները, այլեւ տարբեր մասնաճակատներու ժամանած չորս հազար արաք կամաւորները, որոնք երկուսն են չվերադառնալ իրենց երկիրները: Ռատուի հաստատեց նաեւ, որ Ուրբաթ գիշեր Քուէյթի ինկած հրթիռը իրաքեան է: Ան աւելցուց, որ հրթիռին ծայրէն արձակուած ցոյց կու տայ, թէ թերակողմի ամբողջութեամբ չէ գրաւուած:

Մինչ այդ, դաշնակից ուժերը կը շարունակեն արշաւը դէպի մայրաքաղաք Պաղտատ: Ամերիկացի զօրավար Թոմ Զրէնքս երէկ յայտարարեց, որ պատերազմական գործողութիւնները ըստ ծրագրուածին կը կիրարկուին՝ նկատելի յառաջխաղացով մը: Զրէնքս աւելցուց, որ

դաշնակից ուժերը Պաղտատէն 60 քմ. հեռաւորութեան վրայ կը գտնուին: Ֆրէնքս ըսաւ նաեւ, որ ցամաքային 120 հազար յաւելեալ ուժ տարաբնու որոշումը նախօրօք տրուած էր եւ կապ չունի անցող քանի մը օրերու իրադարձութիւններուն հետ: Իրաքեան հողերու վրայ են 90 հազար ամերիկացի զինուորներ: Ֆրէնքս հերքեց նաեւ այն լուրերը, ըստ որոնց տարակարծիք է պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտի հետ զինուորներու թիւին եւ որդեգրուած ուղղակի գործողութեան մասին:

Պաղտատի հարաւը հաւաքուած դաշնակից ուժերու հրամանատարութիւնը երէկ կը վերջընականացնէր մայրաքաղաքին վրայ յարձակութիւն մին մանրամասնութիւնները: Յամաքային յառաջխաղացին ուղեւորները չուզեցին սակայն օդային յարձակումներուն վրայ: Ամերիկեան ու բրիտանական օդանւեր կը շարունակեն գիշեր-ցերեկ ուժակոծել Պաղտատը մեծաթիւ զոհեր, վիրաւորներ ու աւեր պատճառելով: Տեղեկատուութեան նախարար Մոհամէտ Սայիտ Սահաֆ յայտնեց, որ Շարաթ օր 62 զոհ եւ 107 վիրաւոր արձանագրուած է, աւելցնելով նաեւ, թէ իրաքեան բանակը դաշնակից ուժերու երկու ուղղութիւններ եւ չորս հրամայիք փճացուցած է:

Շար.՝ էջ 10

## ԻՐԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԶԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԿԱՏԱՐԵԼ

Իրան երէկ կոչ ուղղած է Թուրքիոյ Հիւսիսային Իրաքի մէջ միջամտութիւն չկատարելու, հակառակ երկու երկիրներու մտաւախութիւններուն, թէ շրջանին թիրաք փոքրամասնութիւնը ամերիկեան զիւստորութեամբ պատերազմին առիթը պիտի շահագործէ՝ յաւելեալ ինքնավարութիւն ձեռք ձգելու առաջադրութեամբ:

Արտաքին գործոց նախարար Քամալ Սարապի Թեհրանի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Իրան կը հասկնայ եւ կը բաժնէ Թուրքիոյ մտահոգութիւնները, «սակայն թրքական ուժերուն Իրաք մուտքին համախառն չենք»:

Իրան եւ Իրաք ունին այն մտաւախութիւնը, թէ պատերազմին իրենց արդիւնք թիրաք ընթացքները Հիւսիսային Թերքիոյ իրենց հա-


Շար.՝ էջ 10

## ԱՀԱՐԵԿՉՈՒԹԻՒՆ – ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵԶՐԵՐՈՒՆ ԱՐԱՆՔԻՆ

ԷՁ 2

### ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

## ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ. 26 ՎԻՐԱԿՈՐ



Սրճարանը, ուր կատարուեցաւ գործողութիւնը

Իրաքցիական Նեքանիա քաղաքին մէջ շուրջ 26 հոգի վիրաւորուած է երէկ անձնասպանական գործողութեան մը պատճառով: Ըստ հանրային աղաւթութեան նախարար Յախի Հաւակոյի, միայն անձնասպանական գոր-

ծողութեան դիմած անձը սպաննուած է: Իսլամական Ժիհադ խմբակը սպաննուած է գործողութեան դաւադիր խանապոտութիւնը: Պայքումը փեղի ունեցած է «Լոնդոնի Բաթլ»-ի մուտքին, ուր 4 զինուորներ կանգնած էին:

Պաղտատիցի նախարար Սաէպ Էրաքաք յայտնած է, թէ Պաղտատիցի իշխանութիւնը «կը դաւադարարէ քաղաքայիններու դէմ որեւէ յարձակում, ըլլան անոնք Պաղտատիցի թէ իսրայէլացի»:

(ԱՅՓ)

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ 3ԱՂԹԱՆԿ ՏԱՐԱԾ ՈՒԺԵՐՈՒՆ ՀԻՄԱՆ ՎՐԱՅ

ԷՁ 4

## ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄԵՐ ԶՐԴ ԷՋՈՎ ԿԱՐԴԱԼ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԱՆ ԼԻԲԱՆԱՆԱԶԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ

### ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԴԱՄԱՏԱՆԱԿԱՆ ՄԵԶ ՄԻՋԱԴԵՊ

Շարքապետը Լիբանանի Գնդը լուրջ եղանակով բրիտանական «Էյչ. Էս. Սի.» դրամատան չամբայի մասնաճիւղին մէջ տեղի ունեցած միջադէպը: Արդարեւ, Սամիր Ապտէլ Քիւրիմ Պրրո անունով լիբանանցի մը, Նապաթիէն, դրամատուն ներխուժեց եւ սպանացի ինքզինք պայթեցնել, իբրեւ բողոք Իրաքի եւ Պաղեստինի մէջ գործադրուող շարքերուն:

Պրրո պահանջեց ներքին գործոց նախարար Էլիաս Մրրը, որպէսզի անոր հետ կատարէ բանակցութիւններ:

Մրր անմիջապէս հասաւ դրամատուն, ուր առանձին մուտք գործեց եւ բանակցեցաւ Պրրոյի հետ, որ ունէր բազմաթիւ պատանդներ:

Դրամատան պաշտօնէական մէկը՝ Պասսամ Սատան յայտնեց, որ Պրրո առաջին հերթին դրամ պահանջած է երբ մուտք գործած է դրամատուն, ապա յայտնած է, որ կ'ուզէ պատգամ մը փոխանցել ժողովուրդին՝ դատապարտելու համար իրաքցի եւ պաղեստինցի ժողովուրդին դէմ գործադրուող ամերիկեան եւ իսրայէլեան բռնարարները:

Նախարար Մրրի ժամանումէն առաջ, դրամատունը պաշարուեցաւ բանակի եւ ներքին ապահովութեան ուժերուն կողմէ:

Մրրի հետ ունեցած իր բանակցութիւնէն ետք, Պրրո դուրս եկաւ դրամատունէն, փոխանցեց իր պատգամը ներկայ բազմաթիւ լրագրողներուն, ապա անմիջապէս եղաւ ներքին ապահովութեան ուժերուն:

### ՀԱՐԻՐԻ ԵՒ ՊԷԹԸԼ ԲՆԱՆԱԿԵՑԻՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ - ՊԷՅՐՈՒԹ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի շարքապետը Բորայթէի մէջ ընդունելու Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պեթըրը, որուն հետ քննարկեց լիբանանեան մերկեան երկկողմանի յարաբերութիւնները՝ շրջանային յարուած կացութեան լոյսին տակ:

Պեթըր յայտնեց, որ վարչապետ Հարիրիի հետ քննարկած է վերջինիս կողմէ Երոպայ կատարուած շրջապատային արդիւնքները, ինչպէս նաեւ Իրաքի դէմ ամերիկեան պատերազմին շուրջ թեր եւ դէմ կեցուածքները:

Պեթըր նկատել տուաւ նաեւ, որ իմացած է ու հետեւած Հարիրի բրիտանական «Էյչ. Էս. Պի. Սի.» դրամատան մէջ պատահած դէպքին եւ դրուատեց ներքին գործոց նախարար Էլիաս Մրրի յայտարարութիւնը, թէ անհրաժեշտ է պաշտպանել երկրին մէջ գտնուող օտար բոլոր ընկերութիւններն ու կեդրոնները:

Միւս կողմէ հանդիպումէն ետք, վարչապետ Հարիրի յայտնեց, որ Պեթըրի ներկայութեան ինք շեշտած է Լիբանանի մերժողական կեցուածքը ամերիկեան պատերազմին եւ Իրաքի մէջ գործադրուող բռնարարներուն դէմ:

Վարչապետ Հարիրի կոչ ուղղեց նաեւ պատերազմը կասեցնելու անհրաժեշտութեան եւ վերադառնալու ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի միջապահին որոշումներու գործադրութեան: Ան աւելցուց, որ Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը ամբողջովին կը ծառայէ Միջին Արեւելքի մէջ իսրայէլեան շահերուն եւ կը սպաննէ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան գործընթացը:

### Մ. Ե. ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՆԵՐՈՒ ՖՈՒՏԻՆ

● Գեղոյ Ճեղիտեանի մահուան առիթով, Տիպիկ Մեխիմ Կեօղապետիւնեան 50,000 Լ. ռ.

### ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Մէմ Պատիկեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Միգ Արեւեան եւ զաւակունք
- Տիկին Մարի Թուֆիկեան
- Տիկին Աննա Պատիկեան
- Տէր եւ տիկին Մէմ Վ. Պատիկեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վրդէն Վ. Պատիկեան եւ զաւակունք
- Տիկին Ովսաննա Պաքըպեան
- Տիկին Մարի Նաճարեան
- Արեւեան ընտանիք
- Այնթապեան ընտանիք
- Թուֆիկեան ընտանիք
- Պէօյմուշաբեան ընտանիք
- Նաճարեան ընտանիք
- Պաքըպեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց Տօր, աներձօր, մեծ Տօր, եղբօր, Տօրեղբօր, մօրեղբօր, քեռայրին եւ Հարազատին՝

### ՅԱԿՈՒ ՊԵՏԻԿԵԱՆԻ (ՏԾՆԵԱԿ՝ ԸՆԵՍԱԿ, 1923ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Մարտ 2003ին, առաւօտեան ժամը 7:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Թուրքական ընտանիքները պիտի կատարէին Երեքշաբթի, 1 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, Չոքաթ Էլ Պլաթ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Չորնէլ Շրպալէի Հայ Աւետարանական գերեզմանատունը: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ: ● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին դատեր բնակարանը, Ռապուէ (Ռում պատրիարքարանի շրջան) Չորեքշաբթի 2 եւ Հինգշաբթի 3 Մարտին: ● Կը խնդրուի փոխան ծաղկեպակի նուիրատուութիւններ կատարել կրթական հաստատութիւններու:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ

### ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆՇՐԱԺԵՏՈՒԹԻՒՆ Ե ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՋ

ԸՍՄԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Երէկ, առաւօտեան ժամը 11:30ին, յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Համար կից կաթողիկոսարանի վեհաժողովի մէջ տեղի ունեցաւ Հանդիպում - գրոյց՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին եւ լիբանանահայ ուսանող երիտասարդներու միջեւ, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համայնարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ):

Ցանկուն ՀԵՀՈՄ-ին եւ Հանդիպման ներկայ երիտասարդներուն, Հանդիպում - գրոյցի բացման խօսքը արտասանեց ՀԵՀՈՄ-ի Հոգեւոր խորհրդատու Գեղարդ արղ. Քիւսպէքեան: Ան իր

խօսքին մէջ շեշտեց, որ երիտասարդութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Համար յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ, եւ այս տեղի ունեցաւ Հանդիպում - գրոյց՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին եւ լիբանանահայ ուսանող երիտասարդներու միջեւ, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համայնարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ):

Ցանկուն ՀԵՀՈՄ-ին եւ Հանդիպման ներկայ երիտասարդներուն, Հանդիպում - գրոյցի բացման խօսքը արտասանեց ՀԵՀՈՄ-ի Հոգեւոր խորհրդատու Գեղարդ արղ. Քիւսպէքեան: Ան իր

ներքին վեհապալու ըսաւ, որ այս Հանդիպում - գրոյցը ոչ պաշտօնական Հանդիպում մըն է, ոչ ալ դասախօսութիւն: Այս Հանդիպումին գլխաւոր նպատակն է լիբանանահայ երիտասարդութեան դիմագրաւած նորօրեայ մարտահրաւէրներուն մասին մատնանշումներ կատարել եւ երիտասարդները մղել այդ հարցերուն մասին մտածելու:

Վեհապալու կարեւոր նկատեց երիտասարդութեան առանձին դերն ու տեղը մեր ազգային - հասարակական կեանքին մէջ, շեշտելով, որ Հայ երիտասարդութիւնը կը Հանդիսանայ բազմաբարձր մեր ընկերութեան ծոցին մէջ գործող միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ ազգային կառույցներուն:

Սակայն Հայ երիտասարդութիւնը այնպիսի վիճակի մը մէջ է ներկայիս, որ ամէնուրեք իր

Ծար.՝ էջ 8

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Գեղոյ Քէշիշեան եւ զաւակը՝ Վրդէն Տիար Բրիտանիոյ Բէյքիշեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Դրո Քէշիշեան եւ զաւակունք  
Մարո, Նուարդ, Միլիս եւ Ջարեհ Քէշիշեաններ  
Տէր եւ տիկին Անդրանիկ Ուրֆայեան եւ զաւակունք  
Քէշիշեան ընտանիք  
Ուրֆայեան ընտանիք  
Հատուտ ընտանիք  
Շէրպէլեան ընտանիք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մեծ մօր, Տօրաքրոջ եւ Հարազատին՝

### ՍԻՐԱՆ ԲԵՇԻՇԵԱՆԻ (ՏԾՆԵԱԿ՝ ՈՒՐՖԱԼԵԱՆ, Մուսա Լեռ. 1925ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 28 Մարտ 2003ին, Լոս Անճելըսի մէջ: Զուգրկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 1 Ապրիլ, առաւօտեան ժամը 9:00ին, Հովիտի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, Լոս Անճելըս: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ: ● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակին՝ Գեղոյ Քէշիշեանի բնակարանը, Հաննա Մուսա շէնք, Բ. յարկ, Փիտ ժամայէլ թաղ, Մերսեպտա ընկերութեան ետեւի թաղը, հեռ. 01-895321, Երեքշաբթի 1 եւ Չորեքշաբթի 2 Ապրիլին: ● Կը խնդրուի փոխան ծաղկեպակի նուիրատուութիւններ կատարել Այնճարի Ազգային Յանուք քոյէճին:

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Տիգրանուհի Փեհլուեան եւ զաւակները՝ Լեւոն, Անի եւ Թաթիանա  
Տիկին Ֆիլոմէն Փեհլուեան  
Տէր եւ տիկին Գրիգոր Լաչինեան  
Տէր եւ տիկին Միսակ Փեհլուեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Բաֆֆի Փեհլուեան  
Տէր եւ տիկին Փոյ Թաթեան եւ զաւակունք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց Հարազատին՝

### ՄԻՇՐԱՆ ՓԵՇԼՈՒԼԵԱՆԻ (ՏԾՆԵԱԿ՝ 1924ԻՆ)

մահը, որ պատահեցաւ յետ երկարատեւ հիւանդութեան: Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 31 Մարտ, ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պրոճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ● Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ: ● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Երկուշաբթի 31 Մարտ, Երեքշաբթի 1 Ապրիլ եւ Չորեքշաբթի 2 Ապրիլին:

### ԱԿՆԱՐԿ

### ԱՀԱՐԵԿՉՈՒԹԻՒՆ - ԱՆՉՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՉՐԵՐՈՒՆ ԱՐԱՆՔԻՆ

Պատերազմ է եւ պատերազմի ընթացքին ամէն բան, ամէն, նոյնիսկ լեզուամտածողութիւնը կը խաթարուի մարդոց մօտ, տրամաբանութիւնը կը վրիպի: Գիտակցելով հանդերձ այս իրողութեան, անընդունելի է սակայն բառերու գործածութեան, եպրեռու մեկնաբանութեան աղաւաղումը:

Այսպէս, արեւմտեան բանասիր թէ գրատր մամուլը շարքապետը Իրաքի մէջ կատարուած անմասնական երկու գործողութիւնները կը հաղորդէ անդադար գործածելով ահաբեկչութիւն եպրը, մինչ իրականութիւնը բոլորովին տարբեր է:

Մեկնաբանենք:

Ահաբեկչութիւնը եւ անմասնական գործողութիւնը ուրիշ բաներ են: Ինչ որ պատահեցաւ 11 Սեպտեմբեր 2001ին Նիւ Եորքի մէջ, Ուրլիտ Թրէյտ Սենթըրը երկնաքերին դէմ, ահաբեկչութիւն էր, դատապարտելի արարք էր, խափանարարութիւն էր, պոռ մինչեւ օրս կը դատապարտուի համայն աշխարհին կողմէ, որովհետեւ անիկա իւրեք անմեղ մարդոց կեանքը, որովհետեւ անիկա չունէր գաղափարական, ազգային, հայրենասիրական ոչ մէկ համույիչ ենթահող: Բայց նոյնը չէ պարագայ իրաքցի վարորդներուն, որոնք իրենց ականուած ինքնաշարժով կամ բեռնակառքով խոյսցած են ամերիկեան անցարգելի մը եւ պօրանցի մը վրայ ու իրենք վիրենք պայթեցնելով՝ իրենց հետ սպաննած են նաեւ պիստուկներ: Իրաքցիք այդ մէկը բրած են յանուն հայրենիքին ու ազգին, գիտակցաբար պահելով իրենց կեանքը պիստուկներու դէմ, որոնք ապօրինաբար ներխուժած են իրենց երկրէն ներս, բռնաբարձ են իրենց հայրենիքին սահմանները, միջազգային ընտանիքին կողմէ ճանջաբաժնած սահմանները: Հայրենի հողին վրայ բռնազրաւող ուժին դէմ որեւէ գործողութիւն նահատակութիւն է, սրբապան նահատակութիւն, ու չի կրնար նկատուիլ ահաբեկչութիւն: Արեւմուտքը որքան ալ փորձէ խեղափոխել եպրենք ու բառերը, պիտի չյայտնուի, որովհետեւ այսօր ամբողջ աշխարհը, նոյնիսկ Արեւմուտքի ժողովուրդները մեծամասնութեամբ դէմ են կողմնակալ լրատուութեան ու տեղեկատուութեան եւ կը բաժնեն այս գրողութեան մէջ տեղ գտնող տեսակետը: Կը բաւէ հետեւիլ «Եւրոնիւս»-ի այն յայտագիրներուն, ուր ժողովուրդին տրուած է խօսքը, հաստատուելու համար ըսուածը:

Հարցում. Ի՞նչ է տարբերութիւնը վերը յիշուած իրաքցի վարորդներուն, պաղեստինցի քամիքապներուն եւ Բ. Աշխարհամարտին ռեպուսանտի անդամ ֆրանսացիներուն միջեւ: Ոչ մէկ: Անոնք երեքն ալ իրենց փամփուշտը ուղղած են իրենց երկիրները բռնազրաւող ուժերուն դէմ, ի հարկին անմասնական գործողութիւն կատարելով: Եթէ ահաբեկչութիւն է իրաքցի վարորդներուն արարքը, ուրեմն ահաբեկչութիւն է նաեւ ռեպուսանտները: Այս ի՞նչ ծանծաղ տրամաբանութիւն է: Հապա՞ 4000 արաբ երդուեալները, որոնք տարբեր երկիրներէ արդէն հասած են Պաղատա՝ օգնելու իրաքցի իրենց եղբայրներուն, կեանքի գնով. անոնք ալ ահաբեկիչներ են...

Յամենայնդէպս անցած են այն ժամանակները, որ արեւմտեան մամուլին հաղորդումները հայած իւրի պէս կուլ տան աշխարհի ժողովուրդները: Մարդիկ ունին իրենց յատուկ տրամաբանութիւնը, նաեւ ազգային հաւաքական գիտակցութիւնը, որ կը մերժէ սրբապան գաղափարներու աղաւաղումը եւ ոչ միայն կը մերժէ, այլեւ օրէ օր քիչ մը աւելի կը յարի ի՞ր տրամաբանութեան, ի՞ր համոզումներուն ու ամենայն ինքնավստահութեամբ ու հպարտութեամբ կ'ըսէ.

«Մենք լաւ գիտենք ահաբեկչութեան եւ անմասնական գործողութեան էական տարբերութիւնը: Ոգի ի բոնի կը մերժենք ու կը դատապարտենք առաջինը, միեւնոյն ոգիով կը փառաբանենք երկրորդը»:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԱՂԲԱԼԵԱՆ Հ. Մ. Բ. Մ. ՄԱՐԶԱՄԸՍԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

ԲԱՅՈՒՄ - ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ABBAA KUNG FU

ՄԱՐՏԱՐՈՒԵՍԻ ՄԱՐԶՈՒՄԵՐՈՒՆ

ղի կողմնայ Շաբաթ 5 ԱՊՐԻԼ 2003ի երկուշաբթի ժամը 6:00ին

Հովանաւորութեամբ Մեծ Կարպետ ԿԱՐՔԵՊՈՒՄԵՆԻՍ

Մասնակցութեամբ MASTER CHEN JAO YOUNGH

● Մարզումները կը սկսին Շաբաթ, 12 Ապրիլ 2003ին:

● Արձանագրութիւններ՝ Համալիրի տնօրէնութեան մօտ, հեռ. 04-722902/03:

ՇՐՄԵՐ ՄԱՐԶԱՄԵՐ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ

# Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ



Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցույ ա՛նուանակոչու- թեան առիթով, երէկ, 30 Մարտին, Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան եկեղեցույ մէջ մատուցեց Ս. պատարագ:

Արաքս պողոտայի մուտքին Առաջնորդը դիմաւորուեցաւ շրջանի կո- միտէի անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ի շէփորախումբին, Հ.Մ.Ը.Մ. Պորձ Հա- մուտ մասնաճիւղի սկաւտներուն, Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցույ թաղականութեան, դպրաց դասին եւ վարժարանի աշակերտութեան կող- մէ:

Եկեղեցին ողողած մեծ թիով հաւատացեալներուն իր պատգամը փո- խանցելով, Գեղամ եպս. Խաչերեան շեշտը դրաւ ոգեղէն հարստութեան մնայուն ըլլալուն իսկ նիւթականին՝ գնայուն ըլլալու իրողութեան վրայ:

Ան ըսաւ, թէ երբեք պետք չէ տարուի նիւթական, շօշափելի գանձե- թով եւ մոռնալ անշօշափելի՝ հոգեկանը, որ իսկական գանձն ու հարս- տութիւնն է: Ըստ անոր, այս վերջինը ձեռք կը բերուի գործով, աշխա- տանքով, պատուիրաններու գործադրութեամբ, անսակարկ նուիրումով ու Կոնստանտնուպոլսէն ելած թեմայի, թէ այս ուղին է, որ կ'առաջնորդէ եր- կինքի արքայութեան եւ յաւիտենականութեան: Առաջնորդը դիտել տուաւ, թէ այս Կոնստանտնուպոլսէն յաւազոյն օրինակներն են քառասուն մանուկները, որոնք անսացին իրենց հոգիին կանչին, իրենց ետին ձգե- լով նիւթը:

Գեղամ եպս. Խաչերեան անդրադարձաւ այն իրողութեան, թէ մեր նա- խահայերը դժուարին պայմաններու մէջ պահեցին հոգեկան արժէք- ները, կառչած մնացին անոնց եւ մենք մեր կարգին պետք է գործենք յաւերժութեան եւ ոգեղէն արժէքներու ի խնդիր:

Իր խօսքին աւարտին Առաջնորդը ըսաւ, թէ պետք է մեր աղօթքնե- թուն մէջ յիշենք բոլոր անոնք, որոնք կը պայքարին ողջ մնալու համար եւ ամէն վայրկեան կը դիմագրաւեն մահուան սպառնալիքը:

Ապա Առաջնորդը ընթերցեց Արամ Ա. կաթողիկոսին կողմէ եկեղեցույ հոգեւոր հովիւներուն ուղղուած կոնդակները, որոնց մէջ կաթողիկոսը աւագ քահանայութիւն կը շնորհէ Արսէն քինյ. Բէշիշեանի եւ յանջա- խաչ կրելու իրաւունք կու տայ Յարութիւն քինյ. Կոստանեանի:

Պատարագէն ետք տեղի ունեցաւ մատաղօրհնէք, որուն յաջորդէր աւանդական ճաշկերոյթը: Հաւաքոյթի ընթացքին Գեղամ եպս. Խաչերե- ան գնահատանքի գիր յանձնեց Վարդան Գասարճեանի, Սարգիս Պո- դոսեանի եւ Ներսէս Տաղեանի՝ երկար տարիներ եկեղեցույ թաղական խորհուրդին, դպրաց դասին եւ աղքատախնամին ճամբով իրենց ծա- ույութեան համար:

Գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր, որուն մասնակ- ցեցան եկեղեցույ դպրաց դասի անդամները:

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՌՈՒՔԷՆ ՋԱՐԴԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻՂ. ՅԻՍՆԱՄԵԱԿ

### ՈՂՋՈՒՆԵԼԻ ՉԵՌՆԱՐԿ ՄԸ. ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ



Իր հիմնադրութեան յիսնամեակին առի- թով, Համապաշինի «Ռուքէն Ջարդարեան» մասնաճիւղը (Էշրեֆիէ) ձեռնարկած է գեղարուեստական բնոյթի ձեռնարկներու շարքի մը, որուն առա- ջինը յաջողութեամբ պատկուցեալ՝ աշուղա- կան երգերու «Նոան երգ»ը արդի մեկնա- բանութեամբ ամփոփ սկաւտակը: Այս նա- խաձեռնութիւններու շարքին երկրորդը՝ մանկապատանեկան երաժշտական ձեռ- նարկ մը, տեղի ունե- ցաւ Շաբաթ, 29 Մար- տի երեկոյեան ժամը 7:00ին, «Ապատա- մարտ» ակումբի սրա- հին մէջ:

Օրուան հանդիսա- վարը՝ ընկ. Յարութիւն Վարժապետեան իր խօսքին մէջ ծանօթա- ցուց ձեռնարկին նպա- տակը եւ մաղթեց, որ անոր մասնակցող երեխաներն ու պա- տանիները ապագա- յին դառնան հայ մշա- կոյթի մեկական առաք- եալներ:

Շուրջ ժամ մը տե- ւած ձեռնարկին ըն- թացքին տասնհինգ մանուկներ ու պատա- նիներ ելոյթ ունեցան դաշնակով եւ սրին- գով: Անոնց մէջ կային իրենց երաժշտական առաջին քայլերը նե- տող մանուկներէ մին- չեւ որոշ հանգրուան մը հասած ու արդէն ինքնավարաբար տե- յարմարաբար պա- տանիներ:

Մեծապէս քաջալե- թելի է երաժշտական նման երեկոներու կապ- մակերպումը, որ առիթ կու տայ մանուկ ու պա- տանի նուագողներուն՝ ունենալու բեմական ելոյթներ, վարժուելու բեմին, անոր մթնոլոր- տին, ինչ որ նախա- պայմաններէն մէկն է ապագայի յաջող ար- ւեստագետի հանգա- մանքին:

Ողջունելի է նոր վերելք մը ապրող «Ռուքէն Ջարդարե- ան» մասնաճիւղի այս կողով ու համա- կումը յանուն հայ մշակոյթին: Կը մնայ մաղթել յարատեւու- թիւն եւ նորանոր յաջո- ղութիւններ, ի խնդիր մեր հայեցի անաղարտ դիմագիծին:

## «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»ԷՆ ՆՈՐ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ՝ ՄԵԿ ԱՊՐԻԼԷՆ ՍԿՍԵԱԼ

Յետ խորհրդակցութիւններու եւ ծրագրումի, «Վանայ Չայն» մէկ Ապրիլէն սկսեալ կը կիրար- կէ յայտագիրներու եռամեայ նոր ժամանակա- ցոյց մը, որուն մէջ նոյնութեամբ պահուած են որոշ յայտագիրներ, ոմանք ենթարկուած են վե- րատեսութեան եւ բարեփոխուած, ուրիշներ ջնջուած են:

Բնականաբար նոր յայտագիրներու ձայ- նասփռումով փորձ պիտի ըլլայ յուսարձակի տակ բերել որոշ հարցեր եւ ընդլայնել հե- տաքրքրութիւններու ծիրը:

Յայտագիրներու նոր ժամանակացոյցին ճշդման մէջ ճիգ թափուած է, որ խօսքին եւ երաժշտութեան միջեւ հաւասարակշռութիւնը պահուի:

Հոս տեղին է նշել, որ Հայկական Յեղասպա- նութեան հաւաքական յիշողութիւնը վառ պա- հելու առաջադրանքով, «Վանայ Չայն» ամբողջ Ապրիլ ամսուան ընթացքին առօրեայ հերթակա- նութեամբ պիտի պիտի ցեղասպանութենէն ձե- ղոպարած եւ անոր դառն փորձառութիւնը ապ- րած վերապրողներու կարծ վկայութիւններ, ինչպէս նաեւ վանապան հարցապրոյցներու ճամբով ուղարկութեան առարկայ պիտի դառ- նան Հայ Դատի աշխատանքները, Հայկական Յեղասպանութեան ճանաչման հարցը:

Վերջապէս յայտագիրներու նոր ժամանա- կացոյցին մէջ անհրաժեշտութեան պարագային պիտի կատարուին փոփոխութիւններ, յատկա- պէս աննախատեսելի ուղղակի ձայնասփռում- ներու պարագային:

Ստորեւ յայտագիրներու ժամանակացոյցը.

### «ՄԱՔՈՒՐ ՊԱՇՏԵՔ ԱՅՅԵՐԷՆԸ»

Ծանօթ հրապարակագիր, գրագիտուի Շա- հանդուխտ վեր կ'առնէ բոլորս հետաքրքրող հարցեր, կը խօսի յոռի բարքերու, սխալ հայե- բնէն եւ այլ հարցերու մասին:

### «ԿԻՆԸ ԵՒ ԻՐ ԱՇԽԱՐՀԸ»

Մարալ Հարպոյեան ամէն Երեքշաբթի առա- տուեան ժամը 9:30ի լուրերէն անմիջապէս ետք ունկնդիրներուն կը ներկայացնէ օրհորդներն ու կինները շահագրգռող նիւթեր:

### «ՏԵՍԱԿԵՏ»

Այս յայտագիրը յուսարձակի տակ կ'առնէ մեր ընկերութիւնը յուլոյ տարբեր հարցեր՝ ընկե- րային, մշակութային, տնտեսական, կենսոլոր- տային, կրօնական եւ այլն: Տուեալ նիւթին մա- սին իրենց տեսակէտը կը յայտնեն օրուան հի- րերն ու ունկնդիրները՝ ուղղակի ձայնասփռու- մով: Յայտագիրը կը ներկայացնէ Լորիկ Սա- պունճեան, ամէն Երեքշաբթի, կէսօրէ ետք ժա- մը 5:00ին:

### «ՋԱՒԱՍՔԸ ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՈՐ»

Մեկնելով հայրենի Ջաւախքի ներկայացու- ցած կարեւորութենէն այս յայտագիրը կը շա- րունակուի: Բաֆֆի Տեմիրճեան ամէն Հինգ- շաբթի առաւօտեան ժամը 11:00ին կը խօսի Ջա- յախքին մասին՝ տարբեր մարզերու ներկայա- ցումով:

### «ՄԵՆԵՄԱՇԵՆՍՈՐ»

Ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:30ին Լորիկ Սապունճեան յուսարձակի տակ կ'առնէ շարժապատկերի շաբթուան ժապաւէնները:

### «ԲՆԱՐԱՅԻՆ»

Իրմա Գապագեան - Տէտեան ամէն Հինգ- շաբթի երեկոյեան ժամը 8:00ին ունկնդիրնե- րուն հետ է հայ բանաստեղծութեան գոհարնե- րուն մատուցումը:

### «ԳՐԱԿԱՆ ՅՈՒՔԵՐ»

Դոկտ. Սեղա Քիլեճեան կը վերլուծէ գրա- գէտներու գործեր՝ պատմութիւն ներկայացնելով ունկնդիրներուն, ամէն Ուրբաթ կէսօրէ ետք ժա- մը 5:00ին:

### «ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՍՈՒ»

Ամէն Շաբաթ առաւօտեան ժամը 9:30ի լուրե- րէն անմիջապէս ետք «Մշակութային Լրատուն» ձեպի կը ներկայացնէ շաբթուան մշակութային ձեռնարկները:

### «ՎԱՆԱՅԷԹ»

Բաֆֆի Տեմիրճեան կը խօսի համակարգիչի աշխարհին, հայկական կայքէջերու եւ այլ հե- տաքրքրական նիւթերու մասին ամէն Չորեք- շաբթի երեկոյեան ժամը 7:00ին:

### «ԽՍՂ - ՄՐՅԱՆՔ»

Ծանօթ ձեպի հետ է ամբողջ երկու ժամ՝ պա- տանիներով ձեր հեռաձայններուն: Ամէն Եր- կուշաբթի եւ Չորեքշաբթի երեկոյեան ժամը 8:00ին:

### «ՌԱՉՄԿ»

Հայ ապատգրութեան պայքարին մասին մրցանք՝ յեղափոխական եւ հայրենասիրական երգերու ունկնդրութեամբ: Յայտագիրը կը ներ- կայացնէ Սազո Երիտուեան ամէն Երեքշաբթի երեկոյեան ժամը 8:00ին:

### «ՀՐԱՅՄԱՐՏ»

Սազոն եւ Լորիկը ամէն Ուրբաթ երեկոյեան ժամը 8:00ին ձեպի հետ են հետաքրքրական հարցումներով եւ այլպէս նիւթերով:

Այս յայտագիրներուն շարքին են նաեւ Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի մարմինի, Հ. Յ. Լե- Մի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտական շարքերուն պատրաստած յայտագիրները:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿ



Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցույ հիմնադ- րութեան 50ամեակին առիթով, երէկ, Կիրակի, 30 Մարտի առաւօտեան ժամը 10:00ին, եկեղեց- ւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. պատարագ:

Ս. պատարագը մատուցեց եւ քարոզեց Ներ- սէս Պետրոս ԺԹ. Թարմունի պատրիարք: Ան անդրադարձաւ անցնող 50 տարիներուն ըն- թացքին եկեղեցույ ապրած բարգաւաճման գոր- ծընթացին եւ յիշեց այն անձերը, որոնք իրենց դրոշմը ձգած են եկեղեցույ թէ՛ քարեղէն, թէ՛ ոգեղէն կառոյցի ամբողջացման եւ վարգաջ- ման:

Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարք նշեց, թէ հայ եկեղեցին ժողովուրդին միասնականու- թեան տունն է, որ իր հովանիին տակ կ'առնէ ամբողջ ժողովուրդը եւ անոր կու տայ հոգե- մտաւոր դաստիարակութիւն:

Պատրիարքը դիտել տուաւ, թէ Ս. Փրկիչ քա- րաշէն եկեղեցույ հիմնադրութեան 50ամեակը չէ, որ սուկ կը տօնուի, այլ այդ 50 տարիներուն ընթացքին իրենց հաւատքով, աղօթքով ու արարողութեամբ անշունչ կառոյցին շունչ ու հոգի տուած հաւատացեալներուն եւ հոգեւո- ռակականներուն 50ամեակն է, որ կը նշուի: Ան ըսաւ, որ պատերապմի այս օրերուն պետք է աղօթել առանց յուսահատելու, որպէսզի սերը յաղթէ ատելութեան եւ խաղաղութիւն տիրէ Լիւարքի եւ ամբողջ աշխարհի տարածքին:

## ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ԿՈՒՒՉՈՒԻ

● Ժամօ Օհանեսեանի մահուան քառասունցին առի- թով, տըր եւ տիկին Բարգէն Տիգրան 50,000 Լ. ո. Լ. Տ. Յակոբեան Ազգային քոլեճին:

● Հաստատութիւն մը, Տո- րայի շրջան, իր հագուստի ցուցադրարահին համար կարիքը ունի վաճառող օրհորդի մը, դիմել՝ հեռ. 01 260975 եւ 01 268301:

## ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«Վանայ Չայն»-էն ուղղակի ձայնասփռուող շաբաթական յայտագիր՝ **ՏԵՍԱԿԵՏ** Երեքշաբթի, 1 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին, ԳԻՒՐՁ՝ ԱՂԱՆԴՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՅ ՎՏԱՆԳԸ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Կը խօսի՝ **ՔՈՅՐ ԹԵՈՊԻՍԹԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀՈԳՇ. ԳԵՂԱՐԳ ԱՐԳ. ՔԻՒՍՊԷՔԵԱՆ ՊԱՏՈՒԵԼԻՆՇԱՆ ՊԱԳԳԱԼԵԱՆ** Յայտագիրին ամբողջ տեսողութեան հեռաձայ- ցեցը «Վանայ Չայն» 01-267657 եւ 01-241199 թիւերուն եւ տուրք ձեր կարծիքը:

## ԼՕՒԵՒ Ա. ՊՈՒՂՈՒՐԾԵԱՆ ԲՆԱՐԱՅԻՆ ԿԵԳՐՈՆ ԲՆԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Գործ կը փնտնեն՝  
● Մաքրութեան կամ սուրճ եփող տիկիներ  
● Ծերերու եւ մանուկներու խնամատարներ  
● Վարիչներ եւ քարտուղարուհիներ

Կուզուի՝  
● Հիւանդապահուի (BS)  
● Ծերերու լիամամ խնամատարներ (24 ժամ)  
Ըստ ձեռք հեռաձայնի հետեւեալ թիւը 01 253793 Ext. 121 կամ անձամբ ներկայանալ Ա. Պ. Ը. Բ. կեդրոն Ա. յարկ (Երկշ. - Ուրբաթ) ժամը 2:00էն 4:00:

**ԲԱՆՏԱՌՈՒԹՅՈՒՆ**  
Տեր եւ տիկին Ներսէս եւ Նանոր Լիպարեան բախտաւորուած են առջինն աղջիկ զաւակով մը՝ **ԱԼԻՔ** 28 Մարտ 2003

**ԲԱՆՏԱՌՈՒԹՅՈՒՆ**  
Կարօ եւ Հրակ Գըլըպոզեաններ բախտաւորուած են քրոջմով մը՝ **ՆԱՐՕՏ** 27 Մարտ 2003

**ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ**  
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՔԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ՊԱՐԱՆՈՒՄԲ ԿԱԼԱ 24 ՄԱՅԻՍ 2003



# ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

# ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

## ՀԱՐՑԱԶՈՒՅՑ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՒՒՆԸ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱԾ ՈՒԺԵՐՈՒՄՆ ԿՐԱՆ ԿՐԱՅ

### Կ'ՐԱԵ ԸՆԿ. ԳԵՂԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Չաւարեանական էջ»ի խմբագրական կազմը հեռաձայնային շահեկան հարցազրոյց մը ունեցաւ Ը. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ ընկ. Գեղամ Մանուկեանի հետ: Հարցազրոյցին ամբողջութիւնը կու տանք ստորև:

ՀԱՐՑՈՒՄ.- Հայաստանի նախագահական ընտրութիւններուն լոյս սից տակ եւ Ազգային ժողովի ընտրութիւններուն նախօրեակին, ներքին քաղաքական եւ ընտրական ինչպիսի խմբումներ եւ ուժերու վերադասաւորումներ կը պարզուին Հայաստանի մէջ:

ԳԵՂԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ.- Նախագահական ընտրութիւններէն ետք Հայաստանի քաղաքական կեանքին մէջ աւելի յստակացան բոլոր կուսակցութիւններուն դերը, ուժը եւ կարելիութիւններուն սահմանները եւ այն սահմանագամտող դիրք, որ ստեղծուեցաւ նախագահական ընտրութիւններէն ետք, փաստօրէն նոյն շարունակութիւնը կ'ունենայ ներկայիս, ի հարկէ ո'չ թշնամութեան, ո'չ ատեւութեան եւ ոչ այլ իրարու ուղղակի կործանելու մտադրութեամբ:

Կայ կարեւոր հանգամանք մը, որ եթէ նախագահական ընտրութիւններուն ընթացքին Ռոպէրթ Քոչարեանի եւ Ստեփան Դեմիրճեանի աջակցող երկու ճակատ գոյութիւնն ունէր, ապա այսօր այդ ճակատները քիչ մը լուծուած են: Այսօր խորհրդարանական ընտրութիւններուն մէկ կողմէ ռազմա-առանձին հանդէս կու գան նախագահ Ռ. Քոչարեանի սատարած գլխաւոր կուսակցութիւնները, միւս կողմէ, Ստեփան Դեմիրճեանի ճամբարին մէջ, բազմաթիւ կուսակցութիւններ միացան մէկ դաշինքի մէջ, բայց անոնցմէ շատեր իրենց առանձին ջանքերով իջան հրապարակ եւ առանձին պիտի մասնակցին խորհրդարանական ընտրութիւններուն:

Բայց կը կրկնեմ, այդ պայթարը ատեւութեան եւ թշնամութեան հողի վրայ տեղի չունենար: Ի հարկէ կայ մրցակցութիւն, ի հարկէ կայ տարակարծութիւն միջեւ, բայց այնուամենայնիւ ցանկալի ամէն ինչ կը կատարուի, որպէսզի միջոցառումներ չկան հանդուրժողական ըլլայ:

Հ.- Ի՞նչպէս կը մեկնաբանէք, երկիրը ապակայունացնելու ընդդիմադրութեան փորձերը եւ այդ գծով անոր տարած քարոզչութիւնը:

Գ. Մ.- Ի հարկէ, կան բազմաթիւ շահարկումներ եւ այդ շահարկումներուն համար գոյութիւն ունին հետեւեալ պատճառները:

Առաջին պատճառը այն է, որ նախագահական ընտրութիւններուն ընթացքին տեղի ունեցած ընտրական խախտումները կը փորձուի ներկայացնել շատ աւելի մեծ իրականութեան մէջ տեղի ունեցած է: Միեւնոյն ժամանակ փորձ կը կատարուի այդ խախտումներուն պատասխանատուութիւնը բարդել միայն մէկ կողմի եւ ի մասնաւորի՝ նախագահ Ռ. Քոչարեանին աջակցողներուն վրայ, ինչ որ իրականութեան մէջ այդպէս չէ: Բնականաբար նաեւ Ստեփան Դեմիրճեանի աջակցներուն մօտ քաղաքական-տնտեսական ծրագիրներու բացակայութիւնը պատճառակալ կը դառնայ, որ անոնք զտնեն ուրիշ նիւթեր՝ իրենց սեփական տեսակէտները անոնցմով պայմանաւորելու համար, անոնք մասնաւորաբար կը քրքրեն ընտրութիւններուն տեղի ունեցած խախտումները՝ ընտրութիւններուն արդիւնքները կասկածի տակ դնելու համար:

Մէջտեղ եկած երկրորդ պատճառը Տիգրան Նազդալեանի սպանութեան ամբաստանութեամբ Արմին Սարգսեանի ձեռքադրութիւնն էր: Ներկայիս փորձ կը կատարուի այս ձեռքադրութիւնը շահարկել, այդ միջոցով պահել սեփական դէմքը եւ ժողովուրդը բերել հրապարակ: Սակայն արդէն մարդոց մասնակցութեամբ քանակաւ եւ աշխուժութեամբ նուազումը կը վկայեն, որ հասարակութիւնը երկար չէր կրնար շարունակել նոյն ընթացքը եւ օրէ օր այդ թափը շատ աւելի կը պակսի:

Հ.- Ընտրութիւններուն մասնակցող ուժերը գաղափարախօսական ինչ հոսանքներ կը ներկայացնեն:

Գ. Մ.- Եթէ նկատի ունենանք, որ Հայաստանի մէջ դաշինքները շատ երկար կեանք չեն ունենար, եւ ընդհանրապէս գաղափարական-աշխարհահայեացքային հողի վրայ տարանջատուած կուսակցութիւնները շատ աւելի քիչ են, ապա կարելի է ըսել, որ այս առումով խառնակ վիճակ մը գոյութիւն ունի, որովհետեւ չկան գաղափարական - ծրագրային սկզբունքներու հիման վրայ ստեղծուած միաւորումներ, այլ ուղղակի տուեալ պահու հարցերու շուրջը խառնակութեան տակ այդ հոսանքներու միաւորումն է, որ ակնառու է: Այս մէկը մասնաւորապէս յստակ

է ընդդիմութեան դաշինքի՝ «Արդարութիւն» դաշինքի պարագային, որովհետեւ անոր մաս կազմողները տարբեր գաղափարախօսութիւններու հետեւող անձեր եւ հոսանքներ են: Բայց պէտք է նաեւ նկատի ունենալ, որ գոյութիւն ունին ուղղակի գաղափարախօսական-ծրագրային դրոյթներով հանդէս եկող ուժեր: Այստեղ խօսքը Հ. Յ. Դաշնակցութեան, Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան եւ Համայնավար Կուսակցութեան մասին է, որոնք յստակ պատկերացումներ եւ աշխարհահայեացք ունին:

Այնպէս որ ե՛ւ աջ, ե՛ւ ձախ գաղափարախօսութիւններով հանդէս եկող կազմակերպութիւնները կան հրապարակին վրայ եւ ընտրապայքարին մէջ: Կան շատեր, որոնք ամէն տարի կը յայտարարեն, թէ իրենք կեդրոնամէտ են, բայց զբախտարար իրենց սեփական տեսակէտները անոնցմով պայմանաւորելու համար, անոնք մասնաւորաբար կը քրքրեն ընտրութիւններուն տեղի ունեցած խախտումները՝ ընտրութիւններուն արդիւնքները կասկածի տակ դնելու համար:

Հ.- Ի՞նչպէս կը մեկնաբանէք նախագահական ընտրութիւններուն արդիւնքները կասկածի տակ դնելու համար:

Գ. Մ.- Բնականաբար պէտք է բացառել քաղաքական դրդապատճառները, բայց դէտեքու հասարակական տեսակէտները պայմանաւորուած են միայն մէկ հանգամանքով՝ ո՛վ ինչ չափանիշով աշխատանք կը տանի:

ԱՊՀի ղէտներուն պարագային գնահատականը բնականաբար շատ աւելի մեղմ էր, եւ բուն Հայաստանեան (Իրեւնային) խորհրդային Միութեան բաղկացուցիչ մաս) կացութեան մեկնելով է, որ այդ գնահատականը տրուած էր: Իսկ ԵԱՀԿի դէտեքուները պարագային, անոնք այլ շատ յստակ յայտարարեցին՝ Հայաստանի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն գնահատականին համար իրենք չափանիշ որդեգրուած են երկրակալական գաղափարները: Այստեղ ուղղակի մօտեցման ո՛չ ճիշդ պարագայ կայ, որովհետեւ ի վերջոյ կայացած ժողովրդավարական երկիրներու եւ ժողովրդավարութեան ուղղութեամբ իր առաջին քայլերը առնող երկրի մը մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն միջեւ կարելի չէ ամբողջական նմանութիւն տեսնել: Միայն այս հանգամանքով պայմանաւորուած է նաեւ ընդդիմութեան կողմէ այս

գծով մեծ աղմուկ բարձրացնելու երեւոյթը, եւ տեղի ունեցաւ աւելին, քան ինչ որ կ'արժէր:

Հ.- Հայաստանի յառաջիկայ խորհրդարանին մէջ Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորական ծրագիրները ի՞նչ են եւ հանրաքուէի ներկայացուցիչը սահմանադրութեան գծով Հ. Դ. սահմանադրական րարեփոխումներու ինչպիսի առաջարկներ ունին:

Գ. Մ.- Բնականաբար, խորհրդարանական գործունէութեան հետ առնչուող Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրները կը բխին անոր գաղափարախօսութեանէն: Արդէն Հ. Յ. Դաշնակցութիւնը հռչակած է այն գլխաւոր թէզերը, որոնք շուրջ աշխարհային պիտի ծառայէին: Այս աշխատանքը կը վերաբերի գուտ համակարգային փոփոխութիւններուն թէ՛ պետական հասարակային, եւ թէ՛ յատկապէս ընկերային-տնտեսական քաղաքականութեան մէջ, եւ այս իմաստով յառաջիկային հրապարակ պիտի իջնէ պիտի կազմուի այնպէս, ինչպէս որ պիտի ձեւաւորուի Ազգային ժողովը, իսկ Ազգային ժողովը ձեւաւորման մօտին խօսիլը բաւական զփուր է, որովհետեւ տակաւին նոր սկսած է ընտրապայքարը, տակաւին բազմաթիւ ջոկեր պիտի հոսին:

Ի հարկէ, շատ փոփոխութիւններ կրնան տեղի ունենայ, այդ պատճառով ալ տակաւին կանոն է խօսիլը: Մէկ բան միայն յստակ է. Ազգային ժողովին մէջ յաղթանակ տարած հիմնական ուժերու հիման վրայ պիտի կազմուի յառաջիկայ կառավարութիւնը:

Ինչ կը վերաբերի սահմանադրութեան, ապա Հ. Յ. Դ. ներկայացուցիչները միշտ մասնակցած են սահմանադրական փոփոխութիւններու:

յանձնախումբի աշխատանքներուն իրենց առաջարկներով. խորհրդարանական վերջին քննարկումներէն ետք Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորական խմբակցութիւնը կարելիութիւններ ունեցաւ ներկայացնել տասնեակ մը կէտերէ բաղկացած առաջարկներու փաթեթ մը, որ ամենայն հաւանականութեամբ ընդունուած է: Յառաջիկային սահմանադրութեան վերամշակումը տարբերակաւ դարձեալ պիտի ներկայացուի Ազգային ժողովին մէջ, եւ այն ժամանակ աւելի յստակ կը դառնայ, թէ ինչքանով ընդունուած են մեր առաջարկները:

Հ.- Ձեր նախատեսությունները ի՞նչ են ձեւաւորուելու յառաջիկայ կառավարութեան մասին:

Գ. Մ.- Նախատեսութիւնները ամէնէն բարձր են, որովհետեւ Հայաստանի մէջ շատ անշնորհակալ գործ է նախատեսութիւն կատարելը: Բնականաբար Հայաստանի կառավարութիւնը պիտի կազմուի այնպէս, ինչպէս որ պիտի ձեւաւորուի Ազգային ժողովը, իսկ Ազգային ժողովը ձեւաւորման մօտին խօսիլը բաւական զփուր է, որովհետեւ տակաւին նոր սկսած է ընտրապայքարը, տակաւին բազմաթիւ ջոկեր պիտի հոսին:

Ի հարկէ, շատ փոփոխութիւններ կրնան տեղի ունենայ, այդ պատճառով ալ տակաւին կանոն է խօսիլը: Մէկ բան միայն յստակ է. Ազգային ժողովին մէջ յաղթանակ տարած հիմնական ուժերու հիման վրայ պիտի կազմուի յառաջիկայ կառավարութիւնը:

### ՆԱՀԱՆՋԸ ԵՐԳՈՎ, ԹԷ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ...

Միջազգային գեանի վրայ քսանմեկերորդ դարուն հետ գարգացող երեւոյթներ կը տագնապեցնեն թէ՛ ժողովուրդը եւ թէ պետութիւնները, որոնք պատերազմը կ'ապրին պատերազմը սկսելէն առաջ...

Փոքրէք մինչեւ մեծը կը գրադի «գուշակութեան մարգարէ»ով: Տնտեսական իրավիճակը հետզհետէ կը վատարանայ, համաշխարհային ցանցման միտակցան անդրադարձներ կ'արմատաւորուին, եւ մարդիկ մոռնալով իրենց ցաւերը կ'իյնան քաղաքական լաբիրինթոսի գիրկը...

Քսանմեկերորդ դար, ուր կը պահպանուին մարդկային իրաւունքները (մեծաւ մասամբ), կը գարգանա արեւատագրութիւնը, համակարգիչն ու մրցանիշները արձանագրելու տակաւ: Սակայն այս բոլոր նուազումներուն կողքին բացասական եւ դրական տեսանկյունով օժտուած երիտասարդները դրական ինչ նորութիւններ կամ ստեղծագործութիւններ կը յայտնաբերեն պատմութիւնը շարունակելու մշակութային եւ ազգային բաւանով ձեռնարկներ իրագործելու ծիրէն ներս:

ՍԱԼԻ ՔԻՐՈՒՄԵԱՆ

Շար.՝ էջ 10

### ՊԱՏԵՐԱԶՄԸ ՇԱՏՈՆՑ ՍԿՍԱԾ ԷՐ...



Սատամ Շուտյոն

Հինգշաբթի, 20 Մարտին, աշխարհի բոլոր լրատւամիջոցները ահազանգեցին իրաքի դէմ Միացեալ Նահանգներու պատերազմին սկիզբը: Թերթերը, հեռատեսիլի եւ ձայնափուռի կայանները, լրատու գործակալութիւնները, նոյնիսկ համացանցի գանազան կայքեր «աւետեցին» ռմբակոծումներու սկիզբը: Իրականութեան մէջ սակայն, պատերազմը սկսած էր Մարտ 20-ի առաւօտեան կանուխ ժամերէն ամիսներ առաջ, երբ Պուշի վարչակարգը սկսաւ պատերազմի «անհրաժեշտութեան» մասին աշխարհը համոզելու իր արշաւին, գոր ոմանք կոչեցին Միացեալ Նահանգներու դիւանագիտական պատերազմը: Ներքին ճակատի վրայ այս «պատերազմին» ամէնէն հաւատարիմ զինուորագրեալները հանդիսացան ամերիկեան լրատւամիջոցները՝ յաճախ ընդգծելով իրաքի դէմ պատերազմի անխուսափելիութիւնը, լուսարձակի տակ առնելով իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի եւ ենթադրաբար անոր ունեցած քիմիական-հիւլէական զէնքերուն ներկայացուցած «վտանգը»: Միացեալ Նահանգներու ժողովուրդը հոգեպէս պատրաստելով գետնի վրայ մղուելիք պատերազմին:

Մինչ լրատւամիջոցներու պարտականութիւնն է հարցադրել պետութեան յայտարարութիւնները եւ պէտք եղած պարագային քննադատել կեցուածքները, պատերազմի նախօրեակին ամերիկեան լրատւամիջոցները առանց հարցումներու «վաւերականացուցին» իրաքի հիւլէական զէնքերու մասին Պուշի վարչակազմի վարկածը: Այսպէս, իրաքի մօտ հիւլէական ռումբերու «գոյութիւնը» ենթադրութեան դարձաւ իրականութեան: Լրատւամիջոցներու հարցումները քննող ամերիկեան «Ֆէր» կազմակերպութիւնը այս երեւոյթին մասին յողուածի մը մէջ բազմաթիւ օրինակներ կը տրամադրէ: «Ֆէր» կը գրէ, թէ ամերիկեան հեռատեսիլի գլխաւոր կայաններէն «Մի. Պի. Էս.» Դեկտեմբեր 29 2002-ի գլխաւոր լրատւութեան ընթացքին հարցուած է, որ Պուշի վարչակարգը «կը սպառնայ պատերազմ սկսիլ իրաքի եւ անոր գանգուածային քանդումի զէնքերուն դէմ»:

Այլ օրինակ մը տալով «Ֆէր» կը տեղեկացնէ, թէ «Նիւ Յորքի թայմս» թերթը Փետրուար 2-ի թիւին մէջ գրած է. «Ոչ մէկը կը սպասէր, որ պարոն Հիւսէյն քննիչները առաջնորդէ իր ապօրինի թոյններու կամ հրթիռներու թաքստոցին...»: Այս ցայտուն օրինակները կը բացատրատեն, թէ ինչպէս ամերիկեան լրատւամիջոցները, հակառակ նման զէնքերու գոյութեան շօշափելի փաստերու բացակայութեան, ամերիկեան հանրութեան հաւատեցին, թէ իրաք իր օդ ունի գանգուածային քանդումի զէնքեր: Այլ խօսքով, լրատւամիջոցները ամբողջովին անտեսելով ՄԱԿի քննիչներու տեղեկագիրները, մեծ դեր խաղեցան իրաքի դէմ պատերազմին Միացեալ Նահանգներու պատճառաբանութիւնները վաւերական պատճառներու վերածելու մէջ: Այս մէկը կը փաստէ պատերազմէն ժամեր առաջ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի նիստին ընթացքին ՄԱԿի քննիչներու գլխաւոր պատասխանատու Հանս Պիլքոսի այն յայտարարութիւնը, թէ երեքուկէս ամսուան քննութիւններէ ետք կարելի չեղաւ հաստատել, որ իրաք իսկապէս արգիւտած զէնքեր ունի:

Մինչ աշխարհի տարածքին բազմաթիւ երկիրներու մէջ ժողովուրդը փողոցները իջած կը բողոքէր իրաքի նկատմամբ Միացեալ Նահանգներու պաշտօնական կեցուածքին դէմ, ամերիկեան լրատւամիջոցները կը հանդիսանային այդ կեցուածքին ջատագովները: Յունուար 30-էն Փետրուար 12 ժամանակաշրջանին, «Ֆէր» կազմակերպած էր ուսումնասիրութիւն մը, որուն նպատակն էր համադրել ամերիկեան չորս գլխաւոր հեռատեսիլներու «Էյ. Պի. Սի.»-ի, «Մի. Պի. Էս.»-ի, «Էյ. Պի. Մի.»-ի եւ «Փի. Պի. Էս.»-ի զինթրապիլի հարցումներուն ընթացքին հրաւիրուած անձերուն կարծիքները եւ քննել, թէ անոնք արդար են իրենց կեցուածքներուն մէջ եւ երկու կողմերուն տուեալները կը ներկայացնեն: Պարզապէս զուգահիշութիւն մը չէ, որ ամենակցող 393 հիւրերէն 297ը, այլ խօսքով՝ 76 առ հարիւրը, կը բաղկանար նախկին կամ ներկայ պետական կամ զինուորական պաշտօնատարներէ: Աւելին. այդ 297 հիւրերէն միայն 43ը (14 առ հարիւր) իրապրիւրներու ընթացքին միայն 43ը յայտնած է կամ իրաքի դէմ պատերազմին դէմ արտայայտուած է: Հիւրերու այս անհասարակաւ ընդհանուր գոտումը յստակօրէն ցոյց կու տայ, թէ ամերիկեան լրատւամիջոցներու հարցումները մեծապէս

Հ. ՄԱՅՍԵԱՆ

Շար.՝ էջ 9

# Աշակուբային ՀԷ

## «ՆՈԱԶ ԱՐՔ»Ը ԿԸ ՀՐԱՒԻՐՈՒԻ «ՆԻՒ ԵՈՐՔ - ԱՐԹ ԷՔՍՓՕ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

Այս տարի «Նիւ Եորք - Արթ Էքսփո»ի հիմնադրուած 25ամեակի առիթով հրատարակուած էր նաեւ «Նոազ Արք»ը: Նմանօրինակ այլ միջազգային ցուցահանդէսներու առիթով ան միշտ հանդէս եկած է իբրեւ իրանաեան արուեստի ներկայացուցիչ:



Սակայն, տրուած ըլլալով, որ «Նոազ Արք»ը այս անգամ կը ցուցադրէր հայկական արուեստ, ան հանդէս եկաւ իբրեւ Երեւանէն եկող հայկական արուեստի ներկայացուցիչ: Իր ցուցադրած գլխաւոր երկու գեղանկարիչներն էին Վահրաման ու Աղասին: Առաջինն ցուցադրուած թեան դրուած էին քսանմէկ իւզաների ստեղծագործութիւններ, իսկ երկրորդին՝ ինը: Վահրաման անհեթեթ - գերիրապաշտ բնոյթի գործերը կը շօշափեն երաժշտական, պտոյտներու, տարբեր անասնի խողերու եւ այլ բովանդակութեամբ թեմաներ, իսկ Աղասին ներդաշնակ - գերիրապաշտ կտուները կը ներկայացնէ մերկուհիներ, գոյգեր ինչպէս նաեւ՝ բնտանիքներ: Թէեւ այս երկու գեղանկարիչներն ալ շերտօրէն դուրս եկան ամերիկեան գեղանկարչական շահարկողներէն, սակայն Վահրաման արձա-

(տաճանափակ թուաքանակով) եւ աշխարհով մէկ տարածելու արժանի բարձրորակ գործեր: Այդ չորս գեղանկարիչներու շարքին իր պատուաբեր տեղը գրաւեց Վահրամանը:

Իր տարրուածութեամբ «Նիւ Եորք - Արթ Էքսփո» միջազգային մեծագոյն ցուցահանդէսներէն մէկն է: Երբ աշխարհի չորս կողմերէն ժամանած քաղաքացիները գեղանկարչական արձագանքները կ'ընտրեն իրենց համար, ինչպէս որ Վահրամանը արձագանքները կ'ընտրեն իրենց համար:



նապրեց նոր յաղթանակ մը: «Արթ Փաուեր» միջազգային կազմակերպութիւնը ցուցահանդէսին մասնակցած հազարներ կերպարուեստագէտներու մէջէն ընտրեց միայն չորս գեղանկարիչներու ստեղծագործութիւնները՝ իբրեւ համակարգիչով բազմացնելու

միայն չորսը, եւ այդ չորսն ալ մէկը կը նկատուի Վահրաման, ասիկա շատ բան կ'ըսէ առհասարակ հայրենի արուեստի մարտիկներէն եւ մասնաւորաբար Վահրաման ստեղծագործական իւրայատուկութեան եւ արտայայտչականութեան մասին: Ուրախ եմ թե ամբ

## ՋԱԿԱՒԵԻ ՄՇԱԿՈՅԹԸ

Ջաւախքի սարերն այնքան բարձր են, աղբիւրներն այնքան սառնորակ ու զրնգուն, որ թուում է «անառիկ ու վեհանստ լեռներին», «արեւոտ ու հանգիստ սարերին» այս կախարդական յանրահում, խորունկ ձորերի մէջ ու երկնագոյն յանրապարտ փափուկ հովիտներու մէջ չափազանց ցուրտ քամին ամէն օր զարմանալի ասքեր են պատմում:

Պատահական չէ, որ աշխարհի ազնուական բանաստեղծներից մէկը 1902ին այստեղ տեսաւ, թէ ինչպէս բարձրագահ Արուշն ու Մթին սարերը

Վերջին տարիներուն յատուկ ուշադրութեամբ առարկայ դարձած է Ջաւախքը: Հայրենի մանուկն մէջ սկսած են բազմաթիւ յօդուածներ գրուիլ յատկապէս Ջաւախքի մշակոյթին մասին: Ստորեւ կու տանք շահեկան օրինակ մը՝ Մարտին Միքայելեանի ստորագրութեամբ:

պետ Քուչակի, Աշուղ Ջիւանու տողերը: Սակայն նաեւ կարող է այդպիսի ժամանակ երբեք չյայտնուել մարդկութեան ճանապարհին: Օտարներին անպայման

Մէջը մէջքի տուած կազմել վեհափառ Իրենց ուսերին Ջաւախքից էլ վեր Բոնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Մի ուրիշ աշխարհի գոյութիւնը պարտադիր պայման է բոլոր իսկական բանաստեղծների, եթէ կ'ուզէք իսկական մարդու համար, որի հարստութիւնը չափուած է հէնց այդ աշխարհի տարրուածութեամբ եւ շքեղութեամբ:

Աստուծոյ, երկնքի, հողի եւ մարդու հանգէպ ջաւախքու ակնածանքը ինքնին բազմաշերտ մի մշակոյթ է, մարդկային հոգու գեղեցկութիւնը ցուցանող բնական ու «անարուեստ» մի հայելի, որը արհեստագիտական ու նիւթական առաջնութեամբ յատկապէս առհասարակաւ չափանքները համար միամիտ ու բացարձակապէս անպէտք մի բան է թուում: Անզուրպէս աշխարհագրագէտ Լինչը, որի «Հայաստան» երկհատորը հայոց աշխարհագրութեանը, պատմութեանը, որոշ չափով նաեւ ազգագրութեանն ու մշակոյթին նուիրուած լաւագոյն աշխատութիւններից է, 1891ին, այնուամենայնիւ, ոչինչ չհասկացաւ՝ տեսնելով, թէ եկեղեցու շէմի մօտ ինչպէս են հողը երկրպագում Ախալցխայի հայերը:

Ջաւախքի մշակոյթը պայմանաւորուած է այս լեռնաշխարհում ապրող մարդու առանձնայատուկ տեսակով: Նինոծմինտայում, Ախալքալաքում, Մակալում, Ասփինձայում: Ախալքալաքում ապրում են բնիկներ, նաեւ հայոց տարբեր գիւղերից ու քաղաքներից գաղթածներ, նոյնիսկ Կիլիկիայից տեղահանուած հայեր, սակայն Ջաւախքի վրայ տիրական է կարինի ճաշակը: Բնիկ հայերը, որոնք յայտնի են անլիշեթի ժամանակներից, այստեղ ստեղծել են եկեղեցիներ, քանդակներ, խաչքարեր, որոնցից շատերը բարեբախտաբար պահպանուել են: Միացել է նաեւ վրաց պատմիչ Մովսէսի վկայութիւնը, թէ Սուրբ Մովսէսի հետ Փարփալայի մօտ հովիտները խօսել են հայերէն:

Հոգեւոր թուրքի վիթխարի ու ժականութիւն կուտակած հայեր՝ Մովսէս ինտրոդուցիւս, Գրիգոր Նարեկացին, ինչպէս նաեւ Արուշնի Սեբաստացին, Միքայել Նալբանդեանը, Յովհաննէս Թումանեանը, Թորոս Թորամանեանը, Կոմիտասը, Միսաք Մեծարեանը, Յովհաննէս Խան - Մասէհեանը եւ միւսները հայոց Արտաշէս թագաւորի նման երբեք յաղթանակներով չլղկացան եւ այս արքայի նման յաճախ անացին: «Աւաղ, իմ այս անցաւոր փառքին»:

